Հավելված N 2
2025 թվականի հունվարի 15-ին կնքված
1032-11003/25-ՇՑ2 պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 2

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Լոտ 8.1. Շիրակ - ցերեկային կենտրոն (Արթիկ, Գյումրի) |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2025-31.12.2025թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.04.2025 -30.06.2025թթ. |
| Ներկայացման օր | 01.07.2025թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Սիրանուշ Սողոմոնյան<br>Թիմ լիդեր |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- Սոցիալ-հոգեբանական օգնության տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողը անհատական և խմբային աշխատանքների միջոցով հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրել 41 շահառուի, իրականացվել է շահառուների կարիքների գնահատում և վերագնահատում: Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականցվել է թվով 4 ուղղորդում, միջամտություն/միջնորդում այլ կառույցներ:
  Հոգեբանական աջակցության շրջանակներում հոգեբանի կողմից հաշվետու ժամանակահատվածում 20 շահառուի տրամադրվել է անհատական խորհրդատվություն:
  Իրավաբանական խորհրդատվության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ:
- Հաշվետու ժամանակահատվածում ցերեկային կենտրոնում կազմակերպվել է շահառուների ժամանցը՝ մանր եւ խոշոր մոտորիկայի, ուշադրության կենտրոնացման, հիշողության զարգացմանն ուղղված խաղերի, ակտիվացնող պարերի, կապերի ընդլայնման, հյուրերի ընդունելության, հեռուստադիտումների, ընթերցանության և դրանց համապատասխան քննարկումների իրականացման միջոցով:
  Կենտրոնում գործել է շահառուների հետաքրքրություններին համապատասխանող 6 խմբակ՝ ազգային երգ-պար, գեղարվեստ, առողջ ապրելակերպ, հոգեբանական, մամուլի ընթերցում, հմուտ ձեռքեր, որոնց մասնակցել են 25 շահառուներ:
  Կազմակերպվել է թվով 7 մշակութային միջոցառում, որոնց մասնակցել է 40 շահառու: Իրականացված միջոցառումներն են՝ Ավետման, Մայրության ու գեղեցկության օրվա նշում, Սուրբ Զատիկ, այց Ծիծեռնակաբերդի հուշահամալիր եւ Եռաբլուր՝ զինվորական պանթեոն, մայիսյան հաղթանակների եռատոնի նշում, էքսկուրսիա դեպի Էջմիածնի եկեղեցիներ եւ Սարդարապատի հուշահամալիր, Երաժշտության համաշխարհային օր, Շրջակա միջավայրի պահպանության օր:
- Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքային/արտթերապիայի շրջանակներում կազմակերպվել է թվով 3 հանդիպում՝ ուղղված շահառուների խմբային աշխատանքում ինտեգրմանը, խմբային աշխատանքի հմտությունների ձեռքբերմանը, հաղորդակցման հմտությունների զարգացմանը, որին մասնակցել է թվով 17 շահառու:
- Կենտրոնում սննդի տրամադրման շրջանակներում յուրաքանչյուր օր սննդային 2 ընդմիջում է կազմակերպվել:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.

- «Մայրերի օր» հանդիպում- քննարկում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/share/p/12KeEbZXNe4/),
- Այց Ծիծեռնակաբերդ, Եռաբլուր (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/share/p/1CV4HTtQBL/),
- Հանդիպում կենտրոնում՝ Արթիկի Բժշկական քոլեջի ուսանողների հետ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/share/p/1CAS1G8Qqr/),
- «Ես եւ իմ ընկերուհին» խորագրով հոգեբանական - գեղարվեստական միջոցառում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/share/p/19L1JQfHGZ/),
- Սուրբ Զատիկ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/share/p/15hznBfNg7/),
- Էքսկուրսիա դեպի Էջմիածնի եկեղեցիներ եւ Սարդարապատի հուշահամալիր (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/share/p/1AzhGFp8uZ/),
- «Շրջակա միջավայրի օր» քննարկում-միջոցառում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/share/p/16WEejYEbu/),
- «Մեր տարիքը մեր իրավունքն է՝ ապրելու հարգված ու արժանապատիվ կյանքով» խորագրով քննարկում կենտրոնում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/share/p/16tUQK8X1e/):

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Արթիկի ցերեկային կենտրոնի ծառայություններից օգտվել ցանկացող անձինք ուղեգրման համար անհրաժեշտ բժշկական քարտի թմրաբանի և աղիքային խմբի վարակիչ (այդ թվում՝ մակաբուծային) հիվանդությունների հարուցիչների նկատմամբ հետազոտություն անցնելու համար պետք է այցելեն Գյումրու պոլիկլինիկա՝ Արթիկում համապատասխան հետազոտությունների բացակայության պատճառով, ինչը լրացուցիչ դժվարություններ է առաջացնում շահառուների համար, և բարդացնում ուղեգրման գործընթացը:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված են հետևյալ գործողությունները.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ցերեկային խնամքի կենտրոնի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| h/h | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 43/41 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 33 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 1 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 0 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 0 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 1 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 40 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | - |
| 3. | Կարիքի գնահատում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 28 |
| 4. | Աշխատանքային/արտթերապիայի որոշակի տեսակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 17 |
| 5. | Խմբակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 25 |
| 5.1 | ազգային երգ-պար | 17 |
| 5.2 | գեղարվեստ | 17 |
| 5.3 | առողջ ապրելակերպ | 17 |
| 5.4 | հոգեբանական | 17 |
| 5.5 | մամուլի ընթերցում | 17 |
| 6 | Մշակութային միջոցառումների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 40 |
| 6.1 | Այդ թվում՝ կենտրոնից դուրս | 10 |
| 7. | Այլ ծառայություն (նշել)<br>Անհատական հոգեբանական խորհրդատվություն | 20 |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Մխիթարյան* «01» 07. 2025թ

(ստորագրություն, անուն,ազգանուն)